շրջանի նոր սովորոց մանուկներին երկու տարվայ միջոցում են պատրաստում, իսկ այն երեխան, որ գիտէ պատրաստականի առաջին բաժինն, կարող է մի տարվայ միջոցում պրոգիմնազիայի առաջին դասարան համար։ Ընդունվում են հայ, ռուս և պարսից երեխաներ անխտրաբար։ Գ. Կանտարականը միաւորություն ունի այս տարի բաց անել նոյնպէս մի պանսիոն. եթէ հանգամանքները ներեն։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ПОРЯДОКЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

„Порядокъ“ լրագրին կ. Պոլսից գրում են յունվարի 8-ից հետևեալը։ Նոր տարվայ օրերը կ. Պոլսի մէջ արևելեան ճաշակի մի լոր տարածվեցաւ, իբր թէ անաջող փորձ էր արած Միհրհաթ-փաշային թունաւորելու համար։ Պժուար չէ գուշակել, թէ ով էր խանձում թունաւորել այդ մարդուն, որ իր հմարձակությամբ թիւրքաց երկչոտ կառավարության աչքի փուշ է դարձել։ Նրա յանցագործ անցեալ երեք գործերը՝ Արդուլ-Ազիզի սպանությանը մասնակցելը, սահմանագրական կանոնագրության սահեցնելը, նրա բարեկամությունը Լայարդի հետ և վերջապէս նրան Բրինդիզի աքսորելը այժմեան սուլթանին սպանելու ցանկության մէջ կասկածված լինելու պատճառով, բաւական էին նրա մահուան վճիռը կայացնելու համար, հենց որ նա կասկածված կը լինէր իբրև մի անարգելիա անձնաւորություն։

Ալդպիսի գէպք շուտով պատահեցաւ. Միհրհաթ-փաշա այս տարի կասկածվեցաւ թիւրքաց կայսերության Մեացորդներից որոշական միապետություն կազմելու և այդ գաղափարը անցնելու. ձգտում էր մի ազգերի մէջ։ Ալդ կասկածների պատճառով նա ղրկվեցաւ Սիրիայի նահանգապետի պաշտօնից և նոյն պաշտօնով Զմիւռնիա ուղարկվեցաւ։

Բայց թիւրքաց կառավարությունը շատ բուսիչողություն ունի, որ նա կարողանայ մնալով այդպիսի կասկածները և նրանց անպատիժ թողնի։ Ի նկատի ունենալով այն անորոշ դրությունը, որ կարող է նշանաւոր անցքերի պատճառ դառնալ Արևելքի մէջ, թիւրքաց կառավարությունը վախենում է, որ Անգլիային օրերի Միհրհաթը կարող է արտաքին միապետության նման մի գործի ձեռնարկել։ Բայց Կ. Պոլսից ուղարկված գեղատամը վատ վարմացեվոի (գեղագործ) ձեռքը ընկաւ և մահացնող փոշին իր նպատակին գործ չը դրվեցաւ։

Որոշված և չաջողված սպանության դէպքեր քիչ չեն սուլթանի կայսրության մէջ։ Զար լեզուները հաւատացնում են, որ վերջի Ահմեդի ձեռքով նուռերաւի վրա արձակված հրացանն էլ բարձրից էր ուղղված։ Վերջի ի վերջոյ խելագար յայտնված Վերջի Ահմեդի հոգոցությանն էր յանձնված այն ձին, որ սուլթանից ընծայ տրվեցաւ ռուսաց գեսպանատան առաջին քարտուղար Ենուին, հասկանալի է ուրեմն, որ կաշառված ձիապանը հեշտությամբ կարող էր ճանաչել իր պահած ձիու վրա նրատոզ մարդուն, բայց այնպէս պատահեցաւ, որ ռուսաց հաւատարմատարի տեղ զոհվեցաւ Կուռերաւ, որ այդ օրը ցանկություն էր յայտնել սուլթանից Ենուին ընծայած ձիու վրա նստել։

Նոյն շարք լեզուները հաւատացնում են, որ թիւրքաց կառավարությունը չափազանց ատում էր Ենուին, որ արժանացել էր թիւրքերի շարոգի կոմս Իգնատիևի հաւատարմությանը և յարգանքին։ Առաջուց անկարելի էր նախատեսել, որ մարդասպանը խելագար կը յայտնվի։

Իր թշնամի անձանցը կոտորելու այդ շնորքը, որ յատուկ է թիւրքաց կառավարությանը, այն հետևանքն ունեցաւ, որ այսուհետև հայ և յոյն գործիչները, որոնք պաշտպանում են իրանց ազգային շահերը, կատարելապէս պաշարված դրության մէջ են։ Վաղ առաւօտից իրանց անների մէջ փակվելով, նրանք չեն համարձակվում փողոց դուրս գալ, վախենալով սպանվել նոյն իսկ կարգապահ պոլիցիականներից։ Զէաք է նկատել, որ ի նկատի ունենալով քաղաքի մէջ ամեն օր կատարվող աւազակությունները, որոնք երբէք չեն յայտնվում, է. Պոլսի պոլիցիան անզգական հասարակությանը աւազակների կազմակերպված խումբ է երևում։ Արդիշ կերպ չէ էլ կարող լինել։ Ինչպէս որ բարձր հիմնարկությունները են, նոյնպէս և միւսները։

Ցունական խնդրի վերաբերությամբ թիւրքիան նոյն ձևն է գործ դնում, ինչ որ գործ էր դնում Չերնոգորիայի վերաբերությամբ, և ինչ որ միշտ գործ է դրել։ Իր ներկայացուցիչներին օտար պետությունների մոտ անգադար շրջաբերականներ ուղարկելով, որոնցով նա մատնացոյց է լինում իր բարի ցանկությունների և խաղաղ նպատակների վրա, թիւրքաց կառավարությունը մի և նոյն ժամանակ վերջին կողմը ծախսում է ծառայություն կանչված բեգիներին զինաւորելու համար։ Բացի այդ, նոր երեսմն Սամանֆաշային պատերազմական մինիստր նշանակելով, հօրաքրոջ-փաշային մուշիրի աստիճան տալով և ծովային բոլոր ոյժերի հրամանատար նշանակելով, նոյնպէս ծառայությունի կանչելով պատերազմական կուսակցությունը պահանջող բոլոր անգամներին, թիւրքաց կառավարությունը ծաղրում է եւրոպական դեսպաններին, լուրեր տարածելով, թէ պատերազմական նախկին մինիստր Հուսէյն-Հուսանի-փաշա սուլթանի դէմ դաւադրության մէջ է կասկածված, այնպէս որ անհրաժեշտ էր զինուորական երդարխայի մէջ մի քանի փոփոխություններ անել։

Որ թիւրքաց կառավարությունը խաղաղ նպատակներ չունի, դրա երկրորդ ապացոյց կարող են լինել թիւրքաց կիսապաշտոնական „Վակիթ“ լրագրի գրգռող յօդուածները։ Նա հրատարում է խլամի հետևորդներին նուիրապետություններ անել կրօնի պաշտպանների, այսինքն բաշիբուզուկների օգտին։

Ալս հանգամանքը ի նկատի ունենալով թիւրքահպատակ յոյներն օգնում են իրանց հայրենակիցներին։ Ալսպիսով շատ շատ մի չորս տարուց յետոյ մենք արիւնահեղ անցքերի վկաներ կը լինենք։

Թիւրքիայի վարմունքը փորթ-Ալիայի մէջ աչքի է ընկնում իր առանձին յատկանիշներով. Դիսրբեքիրի վիլայեթից այսօր լուր ստացվեցաւ, որ թիւրքաց հեծելազորքի մի խումբ, ցոյց տալով, իբր թէ հալածում է աւազակներին և հանգստություն է պահպանում, անցնում է մի տեղից միւս տեղ, քանդելով գիւղացիներին զանազան յափշտակություններով, հայոց ուսումնարանները պահապան զօրքերի բնակարաններ և ձիանների ախոռներ դարձնելով։ Երբ խիզանի մէջ գիւղական մի հայ ուսուցիչ շրջապատված իր փոքրիկ սաներով ներկայացաւ զաւառի կառավարչին և բողոքեց ուսումնարանները խլելու և երեխաներին փողոցի մէջ թողնելու դէմ, կառավարիչը առանց երկար մտածելու հրամայեց կոթել ուսուցչի ձեռքը, որով նա իր աշակերտներին ցոյց էր տալիս քրիստոնէական այբբենարանի տառերը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի։ Ալսօր Համաշխարհի մէջ կարգադրող Նիստ կար, որ գաւառական կայացրեց փետրվարի 8-ի անկարգություններ անող ուսանողների վրա հանդիսաւոր ակտի ժամանակ։ Ալսօր Համալսարանի բէկիսաթ Բեկետով յայտնեց ուսանողներին, որ ժողովրդական լուսաւորության մինիստր Սարաբով կատարելապէս համոզվեցաւ, որ ակտի ժամանակ անկարգություններ կատարվեցան առանձին անձնաւորություններից, անշնորհ փոքրամասնությունից, որ ուսանողների ուշագին մեծամասնությունը այդ անկարգություններին բոլորովին չէր մասնակցում։ Ժողովրդական լուսաւորության մինիստր Սարաբով ցանկություն յայտնեց, որ գագարեցնեն նրա համար համակրական ցոյցերի անելը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի։ Պետական բանկի 5% առմանկը առաջին շրջանի արժէ 95 ր. 87 կ., երկրորդ 93 ր. 37 կ., երրորդ 93 ր. 75 կ., չորրորդ 93 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառության առմանկը արժէ 225 ր. 25 կ., երկրորդ 223 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառության առմանկը արժէ 92 ր. 75 կ., երկրորդ 92 ր., 87 կ., երրորդ 92 ր. 75 կ., ոսկի 7 ր. 74 կ։ Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 25.¹/₄ պէնս, Ամստերդամի վրա 127,75 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 215¹/₂ մարկ, Փարիզի վրա 267 ֆրանկ։ Բօրսայի տրամագրությունը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԴՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

անման երկրներ. խաչակրները իրանց ամենայնիվ պատերազմներով պարտական են հայոց քաջերին. Մինչև անգամ ամենահեռաւոր Հընդկաստանի թագաւորությունները երկար ժամանակ օգուտ էին քաղում հայ զօրավարների խելքից և քաջությունից։ Ինչու եմ խօսքս երկարացնում։ Ո՞ր երկիրը, որ ազգը, որ թագաւորությունը չէ շահվել հայոց ուժերից։ Նոյն իսկ քո վրատատը, Դաւիթ, քանի-քանի անգամ փրկել է հայ մարդու օգնությունը, բայց միշտ սպիտակ, միշտ անշնորհակալ է մնացել գէպի նոյը։ Եթէ այդ անհոգ, թեթեւամիտ ազգը այսօր գոյություն ունի, դրանով նա պարտական է հայերին։ Հայաստանը, իբրև մի բնական վահան, միշտ պաշտպանել է նրան պարսիկների, արաբացիների և մոնգոլների յարձակումներից։ Արևելքից հեգեղն նման եկած բոլոր բարբարոսների արշաւանքները թափել են իրանց անգթությունը Հայաստանի վրա և անցել, իսկ վրատատը միշտ մնացել է թաղված մեր եռանում։ Եթէ պատահել է մեզ նրանցից օգնություն խնդրել, միշտ սուտ խոստումներով խաբել են մեզ։ Բայց հայը, միամիտ հայը, միշտ մնացել է հաւատարիմ, միշտ անձնանուէր և միշտ զոհաբերել գէպի տարը։ Նա թողել է իր տան գործը, մոռացել է իր ցաւերը և տարի տան հոգին է հոգացել։ Նա թողել է իր երկրի ուժերները և տարի համար պատաներ է կանգնել։ Նա մոռացել է իր խորտակված գանձուցանը և տարի դրօշի փառքն է բարձրացրել։ Մինչ այդ բոլորը դու չը տեսար մեր դատաստանի մէջ.—ահա դրանումն է մեր դէպ-խուր հիւանդությունը։ Մենք մեզ ծառայել չը գիտենք. մենք մեզ համար անշնորհ ենք, իսկ տարի համար ընդհանրապէս։ Եթէ հայոց բոլոր ուժերը վատնված չը լինէին յոգուտ տարների, եթէ նրանք ծառայած լինէին իրանց հայրենիքին, ես հաւատացած եմ, որ այսօր Հայաստանը այս թշուառ դրությունի մէջ չէր լինի»...

«Իմ խօսքը, դու էլ կը հաստատես, Դաւիթ, աւելի ազնիւ և բարեխիղճ ծառայողների մասին է, որոնք թէև իրանց հայրենիքին մի օգուտ չեն հասցրել, բայց ուղղակի վնաս էլ չեն տուել։ Իսկ օրքան շատ է այն դաւանանների թիւը, որոնք մի արիւնռուտ գործիք դառնալով տարների ձեռքում, ոչնչել են իրանց հայրենիքը աւերակ դարձնել, սպանել են իրանց հարազատ եղբայրներին կոտորել։ Թէ առաջիններին և թէ վերջիններին ես շատ լեմ դատապարտում միմեանցից։ Զանազանությունը այսքան է միայն, որ մէկը վնասում է ուղղակի կերպով, գիտակցաբար, իսկ միւսը վնասում է կողմնակի կերպով, անգիտակցաբար։ Մէկը, իբրև ծախված դատաստան, վասակի նման արիւնով և կրակով լեցնում է Հայաստանը, իսկ միւսը, իբրև բարեխիղճ վարդան, պարսից զորքերի գլուխն անցած, Քուշանների հետ է պատերազմում և իր յաղթությունները մեծ և զորությունն է տալիս Հայաստանի թշնամուն։ Ինչ ես կարծում, Դաւիթ, դա նոյնքան վնասակար չէ, որքան առաջինը։ Ես գանձ վնասակար եմ համարում։ Ես կարծում եմ, եթէ վարդանը վերջը իր տարը չը դարձնէր պարսիկների դէմ, նոյնքան վնասակար կը լինէր, որքան վասակը։ Ցառայել հայրենիքի թշնամուն, իր ազգի կործանումն, բարդացնել նրա փառքը և զորությունը,—այդ նշանակում է ի վնաս իր ազգի գործել։ Մեծ տարբերություն չը կայ այդ երկու մարդկանց մէջ։ Դրանք մի արիւնռուտ գործիք դառնալով տարների ձեռքում, ոչնչել են իրանց հայրենիքը աւերակ դարձնել.